# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՊԱՎԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ապավեն համայնք, գ. Ապավեն
☎093-67-40-74
էլ. Փոստ՝ apaven.lori@mta.gov.am

Թիվ Ե / 026-17

<< 15 >> փետրվարի 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան.

Կից ներկայացնում ենք Ձեզ Ապավեն համայնքի ավագանու 2017թվականի փետրվարի 10-ի №№ 06 –Ն որոշումը:

Առդիր՝ << 2 >> թերթ:

Ապավեն համայնքի ղեկավար՝ ____________ Հ. Խաչատուրյան

Կ.Տ (ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԱՊԱՎԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ * 07200605

գ. Ապավեն
15 / 02 / 2017թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՊԱՎԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ապավեն համայնք, հասցե գ. Ապավեն
Հեռախոս՝ 093 67-40-74

## Ո Ր Ո Շ Ու Մ

« 10 » փետրվարի 2017 թվականի N 06 - Ն

## ԱՊԱՎԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով `

Ապավեն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ապավեն համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի :
2. Հաստատել 2016 թվականի Ապավեն համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ղազյան Արբես | — | — | — |
| Դումիկյան Տաթևիկ | | — | — |
| Խաչատուրյան Նորիկ | | — | — |
| Նորոյան Մարգարիտ | | — | — |
| Սուդյան Սևակ | | — | — |

Ապավեն համայնքի ղեկավար __________ Հ. Խաչատուրյան

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզի
Ապավեն համայնքի ավագանու
2017թ. փետրվարի 10-ի
թիվ 06-Ն որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՊԱՎԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ապավեն համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 04-ի թիվ 04-Ն որոշմամբ հաստատված <<Ապավեն գյուղական համայնքի 2013-2016թթ. սոցիալ-տնտեսական զարգացման>> քառամյա ծրագրով նախատեսված ծրագրերից որևէ մեկը 2016 թվականի ընթացքում համայնքային բյուջեի ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չի հաջողվել իրականացնել:

Ապավեն համայնքի ղեկավար՝ ____________________ Հ. Խաչատրյան